

## Կ Ա Ր Գ

### ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են արտոնագրային հավատարմատարների (այսուհետ՝ Հավատարմատար) որակավորման քննությունների անցկացման, Հավատարմատարների գրանցման և վկայականների հանձնման հետ կապված հարաբերությունները:

2. Հավատարմատարների որակավորումն ու գրանցումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Այդ նպատակով Գրասենյակում ստեղծվում է արտոնագրային հավատարմատարների որակավորման հանձնաժողով (այսուհետ՝ Որակավորման հանձնաժողով): Որակավորման հանձնաժողովը մշակում է քննությունների առաջադրանքները, որոշումներ է ընդունում արտոնագրային հավատարմատարների թեկնածուներին քննության թույլատրելու և որակավորելու վերաբերյալ:

#### 2. ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Հավատարմատարների որակավորումը ներառում է՝

1) հավատարմատարի թեկնածուի (այսուհետ՝ Թեկնածու) ներկայացրած փաստաթղթերի ստուգում,

2) թեկնածուի որակավորման քննությունների անցկացում՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սույն որոշմամբ հաստատված արտոնագրային հավատարմատարների կանոնադրությամբ սահմանված մասնագիտական գործունեություն իրականացնելու պատրաստականությունը որոշելու համար՝ հաշվի առնելով Թեկնածուի կողմից նշված մտավոր սեփականության օբյեկտների տեսակները:

4. Սույն կարգի իմաստով մտավոր սեփականության օբյեկտների (այսուհետ՝ ՄՄ օբյեկտներ) տեսակները խմբավորվում են հետևյալ կերպ՝

1) գյուտեր և արդյունաբերական դիզայներ,

2) ապրանքային և սպասարկման նշաններ, աշխարհագրական նշումներ, ծագման տեղանուններ և երաշխավորված ավանդական արտադրանք:

5. Թեկնածուն որակավորման համար Գրասենյակ է ներկայացնում դիմում՝ համաձայն սույն կարգով սահմանված N 1 ձևի:

6. Թեկնածուի դիմումին կցվում են նրա՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության փաստը հաստատող փաստաթղթի պատճենը, համապատասխան բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը, համապատասխան աշխատանքային ստաժը հավաստող փաստաթղթի պատճենը և արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման քննություն ընդունելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

7. Հավատարմատարների որակավորումն ու գրանցումը իրականացնելու համար Գրասենյակի ղեկավարը Գրասենյակի մասնագետներից ստեղծում է արտոնագրային հավատարմատարների որակավորման հանձնաժողով (այսուհետ՝ Որակավորման հանձնաժողով):

8. Որակավորման հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից:

9. Որակավորման հանձնաժողովը՝

1) հաստատում է որակավորման քննության առաջադրանքները՝ հաշվի առնելով թեկնածուների կողմից ներկայացված իրենց գործունեության սահմանափակումները (ըստ ՄՄ օբյեկտների),

2) որոշում է քննության անցկացման ընթացակարգը,

3) քննարկում է թեկնածուների դիմումները և կայացնում է նրանց քննության թույլատրելու վերաբերյալ գրավոր որոշում,

4) քննության արդյունքներով կայացնում է թեկնածուին որպես Հավատարմատար որակավորելու վերաբերյալ որոշում՝ համաձայն սույն կարգով սահմանված N 2 ձևի,

5) քննության արդյունքներով կայացնում է թեկնածուին որպես Հավատարմատար որակավորելու վերաբերյալ մերժման որոշում՝ համաձայն սույն կարգով սահմանված N 3 ձևի:

10. Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է Որակավորման հանձնաժողովը:

11. Թեկնածուի որակավորման քննություններն անցկացվում են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

12. Թեստերը պետք է կազմված լինեն մասնագիտական գիտելիքների տիրապետմանը ներկայացվող պահանջներից:

13. Հաշվի առնելով ՄՍ օբյեկտների տեսակները՝ քննության առաջադրանքները տարբերվում են իրենց բովանդակային առանձնահատկությամբ:

14. Այն դեպքում, երբ թեկնածուն դիմումում նշել է ՄՍ օբյեկտների բոլոր տեսակները, ապա նա պետք է հանձնի թեստ և անցնի հարցազրույց՝ սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ՄՍ օբյեկտների համար:

15. Թեստային առաջադրանքները դրոշմվում են Գրասենյակի կնիքով:

16. Թեստավորմանը մասնակցող թեկնածուներին չի թույլատրվում՝

1) իրենց հետ թեստավորման սենյակ ներս բերել կապի միջոցներ, տեխնիկական սարքեր, տպագիր կամ ձեռագիր նյութեր, թեստային առաջադրանքների կատարման համար աղբյուր հանդիսացող այլ միջոցներ.

2) թեստավորման ընթացքում՝ աղմկել, հուշել.

3) թեստային առաջադրանքների կատարման վերաբերյալ հարցեր տալ ներկա գտնվող անձանց, այդ թվում՝ թեստավորման պատասխանատուին, բացառությամբ՝ տեխնիկական հարցերի.

4) առանց թույլտվության դուրս գալ սենյակից՝ մինչ թեստային առաջադրանքների կատարումն իր կողմից ավարտելը:

17. Թեկնածուի կողմից սույն կարգի 16-րդ կետում նշված չթույլատրված գործողությունները կատարելու դեպքում՝ դադարեցվում է մասնակցի աշխատանքը, այն ճանաչվում է անվավեր և գնահատվում է զրո միավոր:

18. Թեստը բաղկացած է 40 թեստային առաջադրանքներից:

19. Յուրաքանչյուր մասնակցի համար համակարգչի միջոցով դուրս է բերվում թեստային առաջադրանքները և դրանց ճիշտ պատասխանները, որոնց հիման վրա՝ տեղում, պատրաստվում է ձևանմուշ:

20. Որակավորման հանձնաժողովի անդամները համատեղ, ձևանմուշի միջոցով ստուգում են թեկնածուների կողմից նշված պատասխանները:

21. Յուրաքանչյուր մասնակցի համար հաշվարկվում է հավաքած միավորների քանակը և տոկոսը:

22. Թեստային առաջադրանքների կատարման համար թեկնածուին տրամադրվում է վաթսույն բոլոր ժամանակ:

23. Թեստային առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Միսալ պատասխաններ են համարվում ոչ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը, որևէ պատասխան չնշելը:

24. Թեկնածուին տրվում է թեստային առաջադրանքի մեկ սևագիր օրինակ:

25. Թեկնածուն յուրաքանչյուր հարցի համար ընտրում է պատասխանի որևէ տարբերակ և համապատասխան նշում է կատարում թեստային առաջադրանքների պատասխանների այունակում: Թեկնածուն կարող է ավարտել աշխատանքը մինչ թեստի կատարման համար սահմանված ժամանակի ավարտը:

26. Թեստավորման փուլը հաղթահարած են համարվում այն թեկնածուները, ովքեր ճիշտ են պատասխանել թեստային առաջադրանքների առնվազն 90 տոկոսին:

27. Հարցազրույցն անցկացվում է թեստավորման նույն օրը կամ դրան հաջորդող աշխատանքային օրը:

28. Որակավորման հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

29. Հարցազրույցը անցկացվում է մասնակցի կողմից հարցաթերթիկի ընտրությամբ, որը պարունակում է չորս հարց:

30. Հարցազրույցի ընթացքում որակավորման հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է կողմ կամ՝ դեմ: Գնահատականները դրվում են գնահատման թերթիկի վրա:

31. Հարցազրույցի փուլը ձայնագրվում է:

32. Հարցազրույցի փուլը հաղթահարած են համարվում այն թեկնածուները, ովքեր քվեարկության արդյունքում հավաքել են Որակավորման հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:

33. Որակավորման հանձնաժողովի որոշումը մասնակցին տրամադրվում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

34. Թեկնածուն որակավորման քննությունը չհանձնելու կամ նրան որակավորման քննության չթույլատրելու դեպքում կարող է դիմել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդ (այսուհետ՝ Բողոքարկման խորհուրդ)՝ Որակավորման հանձնաժողովի որոշումը ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Բողոքարկման խորհուրդը բողոքի վերաբերյալ որոշումը կայացնում է այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

### **3. ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ**

35. Գրասենյակը Հավատարմատարին գրանցում է որակավորման քննության դրական արդյունքի դեպքում՝ Թեկնածուի դիմումի հիման վրա, որին պետք է կցվի հավատարմատարի գրանցման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը: Գրասենյակը տասը աշխատանքային օրվա ընթացքում Հավատարմատարին գրանցում է Հայաստանի Հանրապետության արտոնագրային հավատարմատարների պետական գրանցամատյանում (հաշվի առնելով Թեկնածուի կողմից նշված ՄՍ օբյեկտների տեսակները) և հանձնում նրան վկայական՝ համաձայն սույն կարգով սահմանված N 4 ձևի:

36. Վկայականը կորցնելու դեպքում Հավատարմատարին տրվում է դրա կրկնակը:

37. Հավատարմատարի գրանցման մասին տեղեկությունները հրապարակվում են Գրասենյակի «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում:

38. Հավատարմատարների թեկնածուի որակավորման քննություն ընդունելու, արտոնագրային հավատարմատարի գրանցման կամ գրանցման մեջ փոփոխություն կատարելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով:

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության  
մտավոր սեփականության գրասենյակ  
Երևան 0010, Հանրապետության հրապարակ,  
Կառավարական տուն 3

**Գ Ի Մ ՈՒ Մ**

**Խնդրում եմ ինձ՝** (անուն, հայրանուն, ազգանունը).

**Որակավորել որպես արտոնագրային հավատարմատար.**

1. Մշտական բնակության վայրը.
2. Կրթությունը (բարձրագույն ուսումնական հաստատության անվանումն ու ավարտելու թվականը).
3. Արտոնագրային հավատարմատարի գործունեության սահմանափակումները (նշվում են նախընտրած մտավոր սեփականության օբյեկտների տեսակները).
4. Նամակագրության հասցեն (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն).

5. Մտավոր սեփականության իրավական պահպանության կամ պաշտպանության բնագավառում աշխատանքային ստաժը.

Ամիսը և տարին		Կազմակերպության անվանումը և նրա գտնվելու վայրը	Հավաստող փաստաթղթեր
սկիզբը	վերջը		

6. Օտար լեզուների իմացությունը.

7. Աշխատանքի վայրը և պաշտոնը.

8. Դիմումին կից ներկայացնում եմ՝

անձը հաստատող փաստաթղթի պատճեն.

մշտական բնակության փաստը հաստատող փաստաթղթի պատճեն.

բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճեն.

Մտավոր սեփականության օբյեկտների պահպանության կամ պաշտպանության բնագավառում աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն.

□ արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման քննություն ընդունելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը՝ \_\_\_\_\_ դրամի չափով.

Դիմումատու՝

անուն, ազգանուն (պաշտոնը)

ստորագրություն

թվական



**Արտոնագրային հավատարմատարների  
որակավորման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն**

**ք. Երևան**

**20 թ.**

20 թ. -ին կայացած որակավորման քննության արդյունքների հիման վրա արտոնագրային հավատարմատարների որակավորման հանձնաժողովը որոշում է՝

-ին որակավորել որպես արտոնագրային հավատարմատար միայն գյուտերի և արդյունաբերական դիզայների (ապրանքային և սպասարկման նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանուններ և երաշխավորված ավանդական արտադրանքների, առանց սահմանափակումների)

Գործունեության սահմանափակումները՝ «»:

Մշտական բնակության վայրը՝

Աշխատանքի վայրը և պաշտոնը՝

Գործունեության հասցեն (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն).

Հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովի անդամ

**Արտոնագրային հավատարմատարների  
որակավորման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն**

**ք. Երևան**

**20 թ.**

20 թ. -ին կայացած որակավորման քննության արդյունքների հիման վրա արտոնագրային հավատարմատարների որակավորման հանձնաժողովը որոշում է՝

մերժել -ին որպես արտոնագրային հավատարմատար որակավորելը:

Հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովի անդամ

Հայաստանի Հանրապետություն



ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿ

**Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N օ**

Արտոնագրային հավատարմատարի

*հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արտոնագրային հավատարմատար*

*Գրանցված է Հայաստանի Հանրապետության արտոնագրային*

*հավատարմատարների պետական գրանցամատյանում*

*Մտավոր սեփականության գրասենյակի արտոնագրային հավատարմատարների*

*որակավորման հանձնաժողովի*

*20թ. -ի N որոշման հիման վրա*

*Մասնագիտական գործունեության սահմանափակումները՝*

Գրանցման N

թ.

Գրասենյակի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ